# ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

**ՏԻԳՐԱՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
*ՀՀ պետական կառավարման ակադեմիա*

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑՈՒ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ

*Տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացումը նոր սերնդի մարտահրավերներ է նետել մարդ արարածին: Սպառողական հոգեբանությունը, իրավիճակային հաճույքները, քաղաքակրթական անորոշությունները փոխել են մարդու վերաբերմունքը կրոնի, եկեղեցու եւ գերբնականի նկատմամբ: Փաստորեն ԻԱ. դարի հրամայականն է՝ «մտածել գլոբալ, գործել լոկալ»: Թվում է, թե աշխարհիկ քաղաքականության մեջ այն ներկայանում է որպես նորույթ, սակայն կրոնը հետեւում էր դրան իր պատմության գրեթե ողջ ընթացքում: Իրականում պատմության մեջ դրանք առաջին գլոբալ ինստիտուտներն էին: Մինչդեռ հավատն առ գերբնականը շարժիչ ուժն է մարդու, հասարակական համակարգերի, մարդկության բարոյամետ կառավարման, նրանց անվտանգության բնականոն արդիականացման գործընթացներում:*

*Հավատն առ բնականոնն ու գերբնականը դրսեւորվում է կրոնի միջոցով: Այն է հասարակական ամեն մի համակարգի զարգացվածության տվյալ մակարդակին համապատասխանող ազգային-քաղաքակրթական զգայական ամբողջական մտածողությունը, ինքնաճանաչման ու լինելության, ինչպես եւ դրանց զարգացման նպատակայնությունը: Աշխարհում գոյություն ունեցող կրոնները, լինելով մշակութային եւ բարոյական արժեքների կրողներ, հաճախ իրենց գործունեության արդյունքում ելք ունեն դեպի քաղաքականություն:*

*Գլոբալ եւ լոկալ քաղաքակրթությունները աղետներից ձերբազատելու, ինչպես նաեւ համակեցության միջոցով մարդուն կյանքի որակ եւ մակարդակ ապահովելու խնդիրները պահանջում են, որ պետական կառավարումը իրականացվի համընդհանուր քաղաքակրթական, ազգային-ավանդույթային փոխլրացումային քաղաքականությանը համապատասխան: Ներկայումս կարեւորվում է, որ պետության կառավարման համակարգը ձեւով լինի ժողովրդավարական-գիտավերլուծական, իսկ բովանդակությամբ՝ ազգային: Ուստի, մարդկության արդիականացման ներկա շրջանը նպատակահարմար ենք համարում անվանել «Փոխլրացումային ընդհանրության գիտավերլուծական սկզբունքով կառավարվող պետությունների» կամ ինքնակարգավորվող, ինքնակառավարվող պետությունների գործառման շրջան: Մինչ ժողովրդավարական անցումից համախմբում հարացույցի գործառումը, դարեր շարունակ պետական կառավարումը հենված էր երկու՝ աշխարհիկ ու հոգեւոր իշխանությունների փոխհարաբերությունների վրա: Գիտության, կրթության եւ մշակույթի կառավարման խնդիրները տարալուծված էին այդ երկուսում՝ հիմնականում գտնվելով հոգեւոր իշխանության հոգածության կենտրոնում:*

*Քաղաքական գործիչները ունեն իշխանություն, սակայն կրոնն ունի առավել մեծ ազդեցություն: Շախմատի տախտակի վրա քաղաքականությունը բաշխում է ֆիգուրներ, իսկ կրոնը փոխում է կյանքը: Կարելի է խաղաղ համաձայնագիր կնքել կլոր սեղանի շուրջ, սակայն եթե խաղաղության ձգտումը չի աճում մարդկանց մտքերում եւ սրտերում, ապա այն չի կարող երկար կյանք ունենալ: Ազգային պետությունները երբեք չունեին այսքան փոքր ազդեցություն տնտեսական զարգացման, քաղաքական լանդշաֆտի եւ շրջակա միջավայրի ձեւավորվման վրա, քանի որ այդ բոլոր երեւույթները չեն տեղայնացվում ազգային սահմանների ներսում*[1]*:*

*Մարդը դարձել է ինդուստրիալ մեխանիզմի մի մասնիկ: Մինչդեռ ազգ-պետությունը ՀՀ-ում որպես հարաբերական անկախության մեջ գտնվող ամբողջություն, ունենալով իր ներքին քաղաքակրթական տարածաժամանակը, գտնվում է ընդհանրական՝ գլոբալ քաղաքակրթական տարածաժամանակում: Այդ համակարգերի ներքին կարգավորվածության, կենսագործունեության եւ զարգացման, ինչպես նաեւ արտաքին՝ գլոբալ քաղաքակրթական շարժումները, փոխհարաբերություններն ու*

[1] Տես Д. **Сакс,** Достоинство различия. Как избежать столкновение цивилизаций. Мосты культуры, Москва, 2008, էջ 24:

*փոխազդեցությունները կատարվում են բարոյական կամ հակառակը՝ բարոյազուրկ ուղղվածություն ունեցող քաղաքակրթական սեփականության դաշտերում առկա «նպատակամետ գործողության սկզբունքով»: Այստեղ սեփականության դաշտը համալիր երևույթ է եւ նյութական, հոգեւոր ու մտավոր ազգային-քաղաքակրթական արժեքների փոխլրացումային ամբողջություն: Այս հենքի վրա կարեւորենք պետության կառավարման ընդհանուր համակարգում հստակ բաժանումը երկրի կենսագործունեության ու զարգացման կառավարումների միջեւ, որն իր նպատակային ուղղվածությամբ պետք է հենված լինի հասարակության ազգային նյութական, հոգեւոր ու մտավոր արժեքների պետական պաշտպանվածության եւ բնականոն զարգացման վրա: Կարեւոր է պետական կառավարման համակարգում իշխանություն իրականացնել նորովի՝ փոխլրացումային տեղ, դեր եւ նշանակություն պետք է ունենան նաեւ գիտությունը, մշակույթն ու բարոյականությունը:*

*Արդի մարտահրավերներին համահունչ ե՛ւ պետությունը, ե՛ւ Եկեղեցին որոշակիորեն պետք է փոխհարաբերվեն՝ ներառելով հայ ժողովրդի արդիականացման բովանդակությունը, որը սկզբնավորվեց 301-ին քրիստոնեության ընդունումից եւ 387 թ. Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջեւ Հայաստանի բաժանումից հետո: Այս համատեքստում հայ կառավարող ընտրանին նորովի լուծեց պետություն-Եկեղեցի փոխհարաբերության հիմնախնդիրը: Քրիստոնեության ընդունումն ու գրերի գյուտը դարձան Արեւելքի (Սասանյան Պարսկաստան) եւ Արեւմուտքի (Բյուզանդական կայսրություն) կողմից ճուլման սպառնալիքի դեմ պայքարի հիմնական զենքերը: Գրերի գյուտը հնարավորություն ընձեռեց հրաժարվելու հունարեն եւ ասորերեն լեզվով քրիստոնեության քարոզումից, ազատվելու բյուզանդական ազդեցությունից: Այդ առումով Ա. Թոյնբին նշում է, որ դա օգնեց հայ ժողովրդի՝ ազգի եւ քաղաքակրթական ինքնուրույն գծերի պահպանմանը[2]: Պետության թուլացումից եւ անկումից հետո տեղի ունեցած փոփոխությունները Հայ եկեղեցուն դարձրին քաղաքական ինքնուրույն ազգային միավոր, որի բնականոն արդիականացումը Հայաստանում ուղեկցվեց դպրոցական կրթության լայն ծավալմամբ եւ թարգմանչական գործունեությամբ:*

*Հայ ժողովրդի առաքելական քաղաքակրթական հիմքի առանձնահատկություններից մեկն այն է, որ պատմական յուրաքանչյուր դարաշրջանում նա ձգտել է ունենալ ազգային կյանք՝ ոչ միայն վերարտադ-*

[2] Տես **А. Тойнби,** Постижение истории, Пер. с англ./сост. А. Огурцов, Москва, 1991, էջ 79:

*րելով իր մշակույթի ավանդական ազգագրական շերտը, այլեւ արդիականացնելով մշակույթի բարձր՝ քաղաքակրթական շերտի ձեւերը՝ գիր, գրականություն եւ դպրոց, գրապրություն եւ մամուլ, գիտություն եւ գեղարվեստ, ճարտարապետություն եւ շինարարական արվեստ, ինչպես նաեւ հանրային կյանքի իրավաքաղաքական կազմակերպում, որոնք ծառայել են ազգային կյանքի կազմակերպմանը: Պետականության կորստից հետո դառնալով նշված արժեքների ստեղծման դերակատար՝ Հայ եկեղեցին ոչ թե փոխարինեց ազգային կյանքի կազմակերպման ու կառավարման ամբողջ համակարգին (ինչպես լինում է կրոնաիշխանական քաղաքական կարգերում), այլ դարձավ այդ համակարգի առանցքային բաղկացուցիչ մաս: Պետականությունից զրկված մարզպանական Հայաստանի համար կարեւորվում է Հայ եկեղեցու դավանաբանական ինքնության եւ ազատության ապահովումը*[3]*:*

*Հայկական քաղաքակրթության բնորոշման մյուս կարեւոր գործոնը գրերի գյուտն էր, որը, հանգեցնելով մայրենի լեզվով մատենագրության տարածմանը, մեծացրեց ոչ միայն ոգեղենականության բաղադրիչը, այլեւ ընդարձակեց առաքելականության սահմանները՝ դառնալով պաշտպանական հզոր վահան օտարերկրյա նվաճողների վարած քաղաքականության դեմ: Փաստորեն գրերի գյուտից, առաքելական Եկեղեցու հիմնադրումից հետո հայերը կարգավորեցին իրենց արժեհամակարգը: Այս գործընթացում որոշիչ դեր ունեցան եկեղեցական ժողովները, որոնք իրենց վերապահելով «օրենսդիր գործոնի նշանակություն»՝ օտագործել են «սահմանք» եզրույթը, որը «...հաճախ կրում է «կանոնի», «օրենքի» հոմանիշ իմաստ...»*[4] *: Այդ առումով նշանակալից էին Աշտիշատի 354 թ. ազգային-եկեղեցական առաջին ժողովի ընդունած որոշումները*[5]*: Քաղաքական պայմանների հրամայականներից ելնելով՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին իր գործունեության դավանաբանական ոլորտում ներառեց հայ ժողովրդի ինքնությունն ու սոցիալ-քաղաքական, մշակութային պաշտպանությունը. «Մի առանձին կարեւորություն ներկայացնող խնդիր է հայ հանրային կյանքի կազմակերպվածքի մեջ Եկեղեցու՝ որպես հասարակական հաստատության գրաված տեղը, այն դերը, որ նա, որպես այդպիսին, կատարեց հայ ժողովրդի պատմության ընթացքում»*[6]*:*

---

[3] **Եզնիկ քին. Պետրոսյան,** Հայ եկեղեցու պատմություն, մաս Ա., Երեւան, 1990, էջ 49:
[4] **Խ. Սամուելյան,** Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 46:
[5] Տես անդ, էջ 337:
[6] **Հ. Գեւորգյան,** Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Երեւան, 2005, էջ 96:

*Անցել են այն ժամանակները, երբ կառավարման համակարգը ամբողջովին կարող էր հենվել նյութական արժեքային դաշտի վրա. գործընթացների ներկայիս արագությունն այլեւս հնարավորություն չի տալիս, որ կառավարման համակարգը մնա մեկ կամ մի քանի անհատների որոշումներից կախված: Այն պարտադիր պետք է վերածվի իմացարանական առումով՝ գիտավերլուծականի, իսկ կազմակերպչական առումով՝ լինի ինքնակառավարվող եւ ինքնակարգավորվող: Պետության գերագույն իշխանության կառավարման օրենքներից ելնելով՝ ներկա իրականությունն ուղղակի պարտադրում է, որ այն միաժամանակ հենվի քաղաքակրթական երեք՝ նյութական, հոգեւոր ու մտավոր արժեքների վրա: Դրանցից անգամ մեկի բացակայությունը վտանգում է հասարակական համակարգի լինելության եւ զարգացման բարոյանպատակամետ ընթացքը: Նախապես անդրադառնանք հասարակական համակարգերում նրա եւ ենթահամակարգերի փոխհարաբերման ձեւին ու կառավարման համակարգով պայմանավորված կայունության խնդիրներին: Ինչպես ցույց ենք տվել աշխատանքում, երկբեւեռ կամայական համագործակցությունը, այսպես թե այնպես, ի վերջո հանգում է հակամարտության կամ փոխադարձ վանման: Համակարգի կայուն համագործակցությունը հնարավոր է դառնում եռաբեւեռ՝ եռանկյունային համագործակցության դաշտի պայմաններում: Այդ առումով հայ քաղաքագետ Մ. Մարգարյանը իրավացիորեն նշել է. «...ժամանակի մարտահրավերներին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է ինքնակազմակերպվել, ինքնահաստատվել ու ինքնահրացնել հայ «Ես»-ը, քանի որ միայն այսպես է հնարավոր գլոբալ քաղաքակրթության մեջ պահպանել հայերիս ուրույն տեղը, դերը եւ տեսակը. լինել ամբողջի մասը՝ ազգային ինքնությամբ»[7]:*

*Համաձայնելով քաղաքագետի հետ՝ նշենք, որ ժամանակակից պետության կառավարման համակարգը պետք է ունենա նպատակամետ գործողության ռազմավարություն՝ փոխլրացումային քաղաքականության միջոցով արդիականացնել «Ես», «Նա», «Մենք» եւ «Նրանք» բազմաչափ գործողությունների ստացած արդյունքները ժողովրդավարության իշխանության մշակույթի կառավարման միջոցով: Այս համատեքստում հատկանշական է ամերիկացի հայտնի սոցիոլոգ եւ քաղաքագետ Ռ. Ինգլհարտի մոտեցումը, որի համաձայն՝ պետության բարձրագույն իշխանությունը եւս առանձին ամբողջություն կազմող*

[7] **Մ. Մարգարյան**, Քաղաքական արդիականացման եւ զարգացման հիմնահարցեր, Երեւան, 2004, էջ 16:

*իշխանությունների փոխլրացումային ամբողջություն է*[8]*: Վերջինիս բնորոշ են աշխարհիկ ու հոգեւոր իշխանության համակարգերի բնականոն ինքնակարգավորման, ինքնազարգացման, ինքնակառավարման փոխլրացումային մեխանիզմներ: Ակնհայտ է, որ թե՛ աշխարհիկ, թե՛ հոգեւոր իշխանությունները պետք է ներդաշնակելով նպաստեն ազգային ինքնության արդիականացմանը, որը կնպաստի մասնակցային մշակույթի բնականոն զարգացմանը:*

*Ուստի, պետության կառավարումը եռաբեւեռ փոխլրացումային համագործակցության կառույց է, որտեղ ընդգծված հստակությամբ իրենց տեղը, դերն ու նշանակությունը պետք է ունենա երկրի հոգեւոր, մտավոր եւ նյութական ներուժը: Դրանց փոխլրացումային հարաճուն համաձայնվածությունը համապատասխանեցվում է հասարակական համակարգի սեփականության դաշտի բաշխվածությանը եւ նրա նպատակային զարգացման հեռանկարին: Ուստի, ազգ-պետությունը, որպես նյութի (մատերիայի) ձեւ, ըստ էության ինքնակարգավորվող, ինքնակառավարվող, լինելության կենսագործունեության, ինքնավերարտադրման, պաշտպանության, անվտանգության եւ զարգացման բնական խնդիրներով ամբողջականացված կենդանի մի օրգանիզմ է՝ օժտված ներքին՝ զգայական (հոգեւոր) եւ արտաքին՝ բնական մտավոր-վերլուծական արժեքային առաջնայնությամբ: Դրանց համապատասխան արժեքները բաշխվում են հասարակական համակարգի մշակութաքաղաքակրթական եւ սեփականության դաշտերի միջեւ՝ իշխանության իրականացման մշակույթի միջոցով ընդարձակելով մասնակցության սոցիալական եւ մշակութային տարածությունը:*

*Այս առումով դա ենթադրում է եւ աշխարհիկ, եւ հոգեւոր ընտրանու բնականոն, մրցունակ, ազգապահպան գործունեություն եւ անորոշություններ կանխում: Քաղաքակրթական անորոշությունների կանխումը, որպես երեւույթ, պարտադրում է մասնակցային մշակույթի միջոցով համագործակցային փոխլրացում՝ աշխարհիկի ու հոգեւորի ներդաշնակում: Միայն այդ միջոցով ե՛ւ հայ հասարակությունը, ե՛ւ ողջ աշխարհը, որպես ինքնապաշտպանական միջոց, խուսափելով ինքնանպատակության վերածվող վտանգավոր պայքարից, անցնում են քաղաքակիրթ բարոյամետ երկխոսության՝ հիմնված «Տեսակն իրավունք չունի ոչնչացնել տեսակին՝ աշխարհը դրանով աղքատանում է» սկզբունքի վրա:*

---

[8] **И. Вельцель,** Модернизация, культурные изменения и демократия: Последовательность человеческого развития, Москва, 2011.

## РЕЗЮМЕ

Статья посвящена вопросу взаимоотношения государства и церкви посредством развития участнической культуры для преодоления вызовов времени. Рассматривая государственное управление как взаимодополняющее единство властей, в статье отмечается особое значение трехполярной взаимодополняющей структуры сотрудничества, где важнейшим является процесс модернизации систем ценностей духовного, интеллектуального и материального потенциала страны. В этом контексте в статье особо рассматриваются и подчеркиваюется место и роль армянской церкви в каждой исторической эпохе как в воспроизведении страты национальной культуры, так и в модернизации форм слоев цивилизации. Автор статьи считает, что в процессе демократизации государственная система управления действует эффективно, если она основана на научно-обоснованном управлении, что создает возможность для конвергенции универсальных, демократических и национальных ценностей и интересов.



## SUMMARY

The article is dedicated to the problem of relations between the State and the Church through the development of participatory culture for overcoming challenges of time. Considering the public administration as a complementary unity of authorities, the article gives great importance to the tripolar complementary structure of cooperation, where the process of modernization of value systems of spiritual, intellectual and material potential of the country is of crucial importance. In that context it specifically examines the role of the Armenian Church in each historical period both in regeneration of national culture layers, and in modernization of forms of civilization layers. It is insisted in that public administration system functions effectively in the process of democratization, if it is founded on evidence-based management. This allows for a convergence of both universal, democratic and national values, and interests.